

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը 2020/2021 ուսուցման տարվա համար հայտարարում է ԲՈՒՀ-ի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) հեռակա ուսուցման մագիստրատուրայի ընդունելություն՝ հետևյալ կրթական ծրագրերով.

N	Մասնագիտություն	Դասիչը	Կրթական ծրագիր	Ուսուցման տևողությունը	Հեռակա ուսուցման տեղերի թիվը	Ուսման վարձի չափը (դրամ)
1.	Տնտեսագիտություն	031101.04.7	Միջազգային տնտեսական հարաբերություններ	2,5 տ.	20	470.000
		031101.13.7	Ձեռնարկատիրական գործունեություն	2,5 տ.	20	470.000
		031101.15.7	Տնտեսության պետական կարգավորում	2 տ.	15	550.000
		031101.16.7	Մակրոտնտեսական վերլուծություն	2 տ.	20	550.000
		031101.21.7	Նորարարությունների տնտեսագիտություն	2 տ.	25	550.000
2.	Հաշվապահական հաշվառում և հարկում	041101.01.7	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	2 տ.	25	550.000
		041101.03.7	Աուդիտ	2 տ.	25	550.000
3.	Ֆինանսներ	041201.02.7	Ապահովագրական գործ	2 տ.	30	550.000
		041201.03.7	Հանրային ֆինանսներ	2,5 տ.	20	470.000
		041201.05.7	Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	2,5 տ.	10	470.000
		041201.06.7	Բանկային գործունեության կազմակերպում	2 տ.	40	550.000
4.	Կառավարում	041301.27.7	Մարդկային ռեսուրսների կառավարում	2 տ.	15	550.000
		041301.32.7	Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	2 տ.	50	550.000
		041301.33.7	Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	2 տ.	30	550.000
		041301.03.7	Պետական և մունիցիպալ կառավարում	2,5 տ.	20	470.000
		041301.04.7	Գործարար վարչարարություն	2,5 տ.	25	470.000
		041301.11.7	Չքոսաշրջության կառավարում	2,5 տ.	20	470.000
		041301.15.7	Կառավարման տեղեկատվական համակարգեր	2,5 տ.	20	370.000
5.	Շուկայագիտություն	041401.06.7	Բիզնեսի կազմակերպում	2 տ.	15	550.000
		041401.07.7	Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	2 տ.	30	550.000
		041401.03.7	Մարքեթինգային հետազոտություններ	2,5 տ.	25	420.000

		041401.04.7	Մարքեթինգային հաղորդակցություններ	2,5 տ.	25	420.000
6.	Վիճակագրություն	056201.04.7	Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	2 տ.	20	550.000
ԸՆԴԱՄԵՆԸ					570	

ՀՊՏՀ հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով (ըստ նախորդ կրթական աստիճանի դիպլոմի հավելվածում գրանցված ուսումնառության բոլոր կիսամյակների արդյունքում կուտակված միջին որակական գնահատականի՝ ՄՈԳ-ի) կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

Հեռակա մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է բացառապես վճարովի հիմունքներով, ուսման տևողությունը՝ ըստ կրթական ծրագրերի 2 և 2.5 տարի է (4 և 5 կիսամյակ):

Ընդունելությունն անցկացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած ուսման վարձի մասնակի գեղչի կիրառմամբ (վճարովի) ուսուցման տեղերի:

Հեռակա մագիստրատուրա ընդունվելու համար **ՀՊՏՀ համապատասխան որակավորում չունեցող կամ այլ ԲՈՒՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտ չհանդիսացող** դիմորդները հանձնում են **շեմային քննություն** համապատասխան կրթական ծրագրերի բակալավրիական ծրագրի հարցաշարերով (հարցաշարերը՝ asue.am կայքում <https://asue.am/am/master-degree/admission-questionnaire-100> հղումով):

Սահմանված տեղերի շրջանակներում, **առանց մասնագիտական շեմային քննության**, ընդունելության մրցույթին կարող են մասնակցել **համապատասխան որակավորման ՀՊՏՀ և այլ ԲՈՒՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտները**:

Ըստ ՄՈԳ-երի ընդունելության մրցույթին սահմանված տեղերի շրջանակներում մասնակցում են համապատասխան որակավորման ՀՊՏՀ և այլ ԲՈՒՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտները, ՀՊՏՀ

համապատասխան որակավորում չունեցող կամ այլ ԲՈՒՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտ չհանդիսացող այն դիմորդները, **ովքեր դրական գնահատական են ստացել շեմային քննությունից:**

Դիմորդների հավասար ՄՈԳ-երի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

- գերազանցության դիպլոմի առկայությունը,
- ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացած միավորը,
- մասնագիտական և մասնագիտացման առարկաներից ստացած միավորների գումարը:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, մինչև ժամը 18:00: Շեմային քննությունը տեղի կունենա մինչև 2020 թվականի հոկտեմբերի 8-ը:

Դիմորդները ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1. մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է առցանց),
2. բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի բնագրերն ու պատճենները կամ ակադեմիական տեղեկանքը (տվյալ տարվա այն շրջանավարտների դեպքում, ովքեր դեռ չեն ստացել ավարտական փաստաթուղթը),
3. անձնագրի լուսապատճենը,
4. 3 x 4 սմ չափի թվային լուսանկար,
5. զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի լուսապատճենը,
6. վերջին 3 տարվա ընթացքում ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության գծով մասնակցում են բանակից զորացրվածների (ԲԶ) համար հատկացված տեղերի մրցույթին, ներկայացնում են նաև տեղեկանք զինկոմիսարիատից (լուսապատճեն)՝ ծառայությունից զորացրվելու վերաբերյալ,
7. դիմորդի առանձնահատուկ կարգավիճակը (արտոնությունը) հավաստող փաստաթղթի լուսապատճենը:
8. ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված

(մահացած) զինծառայողի երեխա լինելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին):

➤ **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Նշված բոլոր փաստաթղթերի բնօրինակները և պատճենները անմիջապես պետք է ներկայացվեն համալսարան դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովի պահանջի դեպքում:** Դիմորդների փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեով, իսկ Գյումրիում և Եղեգնաձորում՝ մասնաճյուղերի ընդունող հանձնաժողովներում:

Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված դիմորդների վերջնական հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալու պահից մինչև *հոկտեմբերի 15-ը*՝ կիսամյակի նվազագույնը երկու ամսվա ուսման վարձը վճարելու և վճարման կտրոնը ընդունող հանձնաժողով ներկայացնելու դեպքում:

Դիմում-հայտում դիմորդը կարող է հայտագրել 2 (երկու) մագիստրոսական կրթական ծրագիր՝ ըստ նախապատվության: Հայտում նշված առաջին ծրագրի չբացվելու կամ մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին: Ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի համապատասխանում ՀՊՏՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 18-ի N 2 որոշման պահանջին: Եթե դիմորդը չի ընդունվում իր հայտագրած կրթական ծրագրերից որևէ մեկում կամ հայտագրած ծրագիրը չի բացվում, ապա ընդունող հանձնաժողովը կարող է նրան առաջարկել որևէ այլ կրթական ծրագիր, որտեղ առկա են թափուր տեղեր՝ տվյալ կրթական ծրագրի մուտքային պահանջները բավարարելու կամ շեմային քննությունը հանձնելու պայմանով:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 58-94-43 հեռախոսահամարով կամ այցելել ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ www.asue.am :